ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 95-Լ

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՈՒԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 30-ի արտահերթ ութերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Աբովյան համայնքի ղեկավարի մի շարք որոշումներ հաստատելու մասին.

3) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում գտնվող փողոցները և փակուղին անվանակոչելու մասին.

4) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 10/6 հասցեում գտնվող հողամասը «Կոտայք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.

5) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Վերին Պտղնի գյուղի նոր թաղամասի 1-ին փողոցի թիվ 29/1 հասցեում գտնվող հողամասը «ՇՈՂ-ՄԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.

6) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Գեղաշեն գյուղի 1-ին թաղամասի 5-րդ փողոցի թիվ 18/1 հասցեում գտնվող հողամասը Նարեկ Մանուկյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.

7) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 26/31 հասցեում գտնվող ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին.

8) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սուրեն Մնացականյան փողոցի թիվ 1/18/3 հասցեում գտնվող տաղավարի պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին.

9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

10) «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Աբովյան համայնքի Առինջ գյուղի Վ. Տերյան թաղամասի 13-րդ փողոցի 8 հասցեում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

11) Ռազմիկ Բլիկյանի կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքերն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում ընդգրկելու մասին.
13) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.
14) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին.
15) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7 շենքի 62 և 63 բնակարաններն անհատույց օտարելու մասին.
16) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 7.79208 հեկտար մակերեսով հողամասն առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.
17) «Անտրացիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Գեղաշեն բնակավայրի տարածքում գտնվող թիվ 07-023-0229-0098 կադաստրային ծածկագրով 7,79208 հեկտար մակերեսով հողամասում օգտակար հանածոների արդյունահանման գործունեություն ծավալելու կապակցությամբ ուղերձ ընդունելու մասին.
18) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՉԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 96-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 60-րդ, 64-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է*.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին» N 111-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված հավելվածի գծագրական և տեքստային մասում՝ Արամուս բնակավայրի զարգացման և տարածքի գոտևորման հատակագծում Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող 07-013-0130-0017 կադաստրային ծածկագրով 0.1266 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (վարելահող) նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս՝ նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների աղյուսակի 1.1-ին տողի 2-րդ սյունակում «659.5347» թիվը փոխարինել «659.4081» թվով, 3-րդ սյունակում՝ «609.3247» թիվը փոխարինել «609.1981» թվով, 2.1-ին տողի 2-րդ սունյակում «181.6747» թիվը փոխարինել «181.8013» թվով, իսկ 3-րդ սյունակում՝ «186.0347» թիվը փոխարինել «186.1613» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՉԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2026 թվականի N 97-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Աբովյան համայնքի ղեկավարի որոշումները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՁԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՁԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 30-ի N 97-Ա որոշման

**ՑԱՆԿ**
**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ**

| | Սեփականատեր(եր) | Համայնքի ղեկավարի որոշման համար | Կադաստրային ծածկագիր | Մակերես (քմ) | Գործառնական նշանակություն | Փոփոխվող գործառնական նշանակություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Աբովյան համայնք | N 2307 | 07-002-0070-0501 | 20.0 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 2 | Աբովյան համայնք | N 2609 | 07-002-0025-0189-հց | 427.3 | Այլ հողեր | Բնակելի կառուցապատման |
| 3 | Աբովյան համայնք | N 2614 | 07-002-0048-0058 | 3401.8 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 4 | Աբովյան համայնք | N 2882 | 07-002-0016-0006 | 8503.2 | Այլ հողեր | Հասարակական կառուցապատման |
| 5 | Աբովյան համայնք | N 2883 | 07-002-0030-0040 | 5070.4 | Այլ հողեր | Հասարակական կառուցապատման |
| 6 | Աբովյան համայնք | N 2615 | 07-011-0143-0065-հց | 257.9 | Այլ հողեր | Բնակելի կառուցապատման |
| 7 | Գառնիկ Ալոյան | N 2716 | 07-002-0036-0740 | 4670.5 | Հասարակական կառուցապատման | Բնակելի կառուցապատման |
| 8 | Գառնիկ Ալոյան | N 2717 | 07-002-0036-0744 | 4724.2 | Հասարակական կառուցապատման | Բնակելի կառուցապատման |
| 9 | Գառնիկ Ալոյան | N 2718 | 07-002-0036-0742 | 4248.3 | Հասարակական կառուցապատման | Բնակելի կառուցապատման |
| 10 | Գյուլնարա Համբարձումյան | N 2681 | 07-002-0082-0510 | 30.0 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 11 | Տիգրան Մանուկյան | N 2605 | 07-002-0108-0029 | 300.0 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 12 | Մարտիկ Փաթաթանյան | N 2537 | 07-002-0086-0378 | 36.7 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 13 | Կարինե Խաչատրյան | N 2529 | 07-002-0055-0112 | 30.0 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 14 | Գրիգոր Պողոսյան, Արուսյակ Առաքելյան | N 2498 | 07-002-0067-0024 | 165.5 | Հասարակական կառուցապատման | Բնակելի կառուցապատման |
| 15 | Նարեկ Գալստյան | N 2495 | 07-002-0086-0461 | 48.7 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 16 | Արման Նահապետյան | N 2393 | 07-002-0039-1693 | 20.0 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 17 | Գարիկ Մկրտչյան | N 2496 | 07-023-0057-0026 | 63.8 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 18 | Արմեն և Նոնա Ջաիմցյաններ | N 2377 | 07-054-0033-0057 | 400.0 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |
| 19 | Ռոզա, Արմեն, Լաուրա Լալայաններ | N 2886 | 07-013-0030-0008 | 300.0 | Բնակելի կառուցապատման | Հասարակական կառուցապատման |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 98-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԵՎ ՓԱԿՈՒՂԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասում գտնվող փողոցն անվանակոչել՝ «համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի 2-րդ փողոց» (իրադրության հատակագիծը կցվում է):
2. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասում գտնվող փողոցն անվանակոչել՝ «համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի 3-րդ փողոց» (իրադրության հատակագիծը կցվում է):
3. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասում գտնվող փողոցն անվանակոչել՝ «համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի 4-րդ փողոց» (իրադրության հատակագիծը կցվում է):
4. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Է. Պետրոսյան փողոցից դեպի ձախ գտնվող փակուղին անվանակոչել՝ «համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Է. Պետրոսյան փողոց, 1-ին փակուղի» (իրադրության հատակագիծը կցվում է):
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՉԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան


0028
0538
0027
7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամաս 2-րդ փողոց


0539
0538
0540
0033
0032
0542
0031
0544


0539
0033
0540
0032
0541



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 99-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԻ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 29/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ «ՇՈՂ-ՄԱԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման և հիմք ընդունելով «ՇՈՂ-ՄԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի լիազորած անձ Գեղամ Թորգոմյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հունիսի 08-ի N Տ-1673), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. «ՇՈՂ-ՄԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հիմք՝ 2026 թվականի մարտի 09-ի N 09032026-07-0042 վկայական) Վերին Պտղնի գյուղի Նոր թաղամասի 1-ին փողոցի թիվ 29 հասցեում գտնվող 07-062-0016-0074 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 1644.72 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման և 986.28 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2026 թվականի հունիսի 06-ի N 06062026-07-0014 վկայական) Վերին Պտղնի գյուղի Նոր թաղամասի 1-ին փողոցի թիվ 29/1 հասցեում գտնվող 07-062-0016-0094 կադաստրային ծածկագրով 104.49 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-062-0016-0074 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր «ՇՈՂ-ՄԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. «ՇՈՂ-ՄԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 1 690 300 (մեկ միլիոն վեց հարյուր իննսուն հազար երեք հարյուր) դրամ՝ օտարվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «ՇՈՂ-ՄԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 100-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման, հիմք ընդունելով Նարեկ Մանուկյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի ապրիլի 18-ի N Ք-2633), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Նարեկ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի օգոստոսի 16-ի N 16082023-07-0164 վկայական) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղի 1-ին թաղամասի 5-րդ փողոցի թիվ 18 հասցեում գտնվող 07-023-0093-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 3364.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2026 թվականի մարտի 26-ի N 26032026-07-0064 վկայական) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղի 1-ին թաղամասի 5-րդ փողոցի թիվ 18/1 հասցեում գտնվող 07-023-0093-0026 կադաստրային ծածկագրով 861.7 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-023-0093-0010 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Նարեկ Մանուկի Մանուկյանին:

2. Նարեկ Մանուկյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 1 052 140 (մեկ միլիոն հիսուներկու հազար հարյուր քառասուն) դրամ՝ օտարվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Նարեկ Մանուկյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարեկ Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՁԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 101-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ ԹԻՎ 26/31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինության զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշմամբ հաստատված Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերով ներառված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով Արթուր Սիմոնյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հունիսի 10-ի N Ք-4187), Աբովյան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Արթուր և Ալլա Սիմոնյաններին պատկանող (հիմք՝ 2024 թվականի օգոստոսի 09-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագրեր՝ գրանցված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում՝ N 5769 և N 5770) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 26/31 հասցեում գտնվող ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար առանձնացված Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2026 թվականի հունիսի 02-ի N 02062026-07-0151 վկայական) 20.2 քառակուսի մետր մակերեսով 07-002-0082-0212 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել Արթուր Ժորայի և Ալլա Գետեֆոնի Սիմոնյաններին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 326 770 (երեք հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր յոթանասուն) դրամ՝ հողամասի գինը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՁԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 102-Ա

## ԱՐԶՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Արզովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2026 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արզովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Արզովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:

3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 30-ի N 102-Ա որոշման

ՑԱՆԿ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ

| Հ/Հ | Հասցեն | Հողամասի ծածկագիրը | Անշարժ գույքի անվանումը | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | ք. Աբովյան 3-րդ միկրոշրջան 23/2 | 07-002-0058-0445 | ավտոտնակ | բնակավայրերի, բնակելի |
| 2 | ք. Աբովյան 4-րդ միկրոշրջան 44/6 | 07-002-0039-1954 | տարածք | բնակավայրերի, հասարակական |
| 3 | ք. Աբովյան Հատիսի փողոց 4/1 | 07-002-0116-0434 | ավտոլվացման կետ | բնակավայրերի, հասարակական |
| 4 | ք. Աբովյան 2-րդ միկրոշրջան 2/622 | 07-002-050-093 | ավտոտնակ | բնակավայրերի, բնակելի |
| 5 | ք. Աբովյան 2-րդ միկրոշրջան 2/120 | 07-002-049-128 | ավտոտնակ | բնակավայրերի, բնակելի |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 103-Ա

## «ԷԿՈ ԱԳՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Վ. ՏԵՐՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի, հաշվի առնելով 2026 թվականի հունիսի 4-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2026 թվականի ապրիլի 23-ի N Տ-1273), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ գյուղի Վ. Տերյան թաղամասի 13-րդ փողոցի 8 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիր կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ՁԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՁԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 104-Ա

## ՌԱԶՄԻԿ ԲԼԻԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի, հաշվի առնելով 2026 թվականի մայիսի 11-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով Ռազմիկ Բլիկյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի մարտի 10-ի N Ք-1510), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն Ռազմիկ Բլիկյանի կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 1/11 հասցեում բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 105-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքերը՝ Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մեսրոպ Մաշտոցի փողոց 68 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ (հիմք՝ 2026 թվականի մայիսի 19-ի N 19052026-07-0028 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական) 184 287 640 (հարյուր ութսունչորս միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր քառասուն) դրամ կադաստրային արժեքով (գույքային համար՝ 4105535), ինչպես նաև Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի ջրահեռացման համակարգը՝ կոյուղագիծ 376.9 մետր, (հիմք՝ 2026 թվականի հունիսի 1-ի N 04062026-07-0167 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական) 14 885 930 (տասնչորս միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր երեսուն) դրամ հաշվեկշռային արժեքով (գույքային համար՝ 4105536) ընդգրկել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2026 թվականի N 106-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1.8-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1- N 4 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԻՄԱ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵԴԱ

ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՆ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հունիսի 30
ք. Աբովյան

Հավելված 1
Աբովյան համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 30-ի
N 106- Ա որոշման

**Աբովյան համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումների առանձնահատկությունները**

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես դրանց ծրագրավորման ժամանակային հորիզոնով, այնպես էլ յուրաքանչյուր փուլում ծրագրավորվող տարրերի ագրեգացման մակարդակով: Այսպես, կախված ծրագրավորման ժամանակային հորիզոնից՝ նախատեսվում է հնգամյա ժամանակահատվածի (երկարաժամկետ), եռամյա ժամանակահատվածի (միջնաժամկետ) և մեկ տարվա ժամանակահատվածի (կարճաժամկետ) ծրագրերի մշակում: Երկարաժամկետ ծրագրերում ծրագրային տարրերը ներկայացվում են ագրեգացման առավել բարձր մակարդակով, քան միջնաժամկետ ծրագրերում, իսկ միջնաժամկետ ծրագրերում դրանց մակարդակն ավելի բարձր է, քան կարճաժամկետ ծրագրերում:

Վերը նշված ծրագրավորման երեք փուլերը փոխկապակցված են, և յուրաքանչյուր փուլում կազմված և սահմանված կարգով հաստատված ծրագիրը հիմք է հանդիսանում հաջորդ փուլում կազմվելիք ծրագրի համար: Մասնավորապես, երկարաժամկետ ծրագիրը հիմք է հանդիսանում միջնաժամկետ ծրագրի մշակման համար, իսկ միջնաժամկետ ծրագիրը իր հերթին հիմք է հանդիսանում կարճաժամկետ ծրագրի մշակման համար:

Համայնքի երկարաժամկետ ծրագիրը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն է, միջնաժամկետ ծրագիրը՝ երեք տարվա համար կազմվող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է, իսկ կարճաժամկետ ծրագիրը՝ մեկ տարվա համար կազմվող համայնքի բյուջեն է: Եթե համայնքի զարգացման ծրագիրը հաստատվում է մեկ անգամ ավագանու լիազորությունների ամբողջ ժամանակահատվածի՝ 5 տարվա համար (անհրաժեշտության դեպքում կարող են լինել փոփոխություններ), ապա համայնքի

միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում և հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա 3 տարվա համար:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Այսինքն՝ համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման գործընթացն առաջնորդվելու է արդեն իսկ կազմված համայնքի ՄԺԾԾ-ով՝ առաջիկա տարվա համար հաստատված հաշվարկներով և հիմնավորումներով: Եվ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ համայնքի ՄԺԾԾ նախագծի մշակումը նույնպես, ինչպես և տարեկան բյուջեի նախագծի մշակումը, համայնքի բյուջետային գործընթացի լիիրավ փուլ է համարվում:

Համայնքի եռամյա միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման փուլի ներմուծմամբ համայնքի համար հնարավորություն է ընձեռնվում անցնել եռամյա ֆինանսական ծրագրավորմանը և տեսնել համայնքի բյուջեի մշակման փուլին բնորոշ մեկ տարվա տեսադաշտից ավելի հեռու՝ երեք տարվա հորիզոնով: Այդ ժամանակահատվածում համայնքի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցության կանխատեսումները հնարավորություն կընձեռնեն համայնքին մի կողմից՝ մեծացնել համայնքի ֆինանսական ծրագրերի կանխատեսելիությունը, ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական

մեխանիզմների հստակեցումը, իսկ մյուս կողմից՝ բարձրացնել համայնքներում բյուջետային կարգապահությունը և հաշվետվողականությունը: Առաջիկա երեք տարվա՝ տեղական ինքնակառավարման մարմինների ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքների համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

**Աբովյան համայնքի** 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Աբովյան համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Աբովյան համայնքի հաջորդող երեք տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

## Աբովյան համայնքի բյուջեի ՄԺԾԾ ոլորտային գերակայությունները

Գերակայությունները որոշվում են ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները և հաշվի առնելով համայնքի խնդիրները, համայնքը իր առջև դրել է հետևյալ գերակայությունները՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:
- Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը:
- Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում՝ համադրելով ֆինանսական ծրագրերի (հանրային հատվածի հաշվապահություն, ՀՀ ՖՆ գանձապետարանի ծրագիր) և ամփոփ հաշվեկշիռների հրապարակայնություն ՀԿՏՀ-ում:
- Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Աջակցություն ցուցաբերել և իրականացնել միջոցառումներ համայնքի բնակչության՝ խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամներին ֆինանսական կամ նյութական օգնություն տրամադրելու գործում:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային, կոմունալ տնտեսության բարեկարգման, ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը, առկա լուսավորության համակարգը փոխարինելով էներգախնայող լուսատուներով:
- Խթանել համայնքում գենդերային, հաշմանդամության և խոցելի խմբերի համար ծրագրերի իրականացումը:
- Իրականացնել օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ՝ պաշտպանության և արտակարգ իրավիճակների պայմաններում գործողություններ իրականացնելու ոլորտում:

**Համայնքների եկամուտները՝**

2027-2029 թվականների Աբովյան համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում առաջիկա երեք տարիների համար համայնքի եկամուտները պլանավորելիս հիմք է

հանդիսացել օրենքով սահմանված և նախորդ երեք տարիներին հավաքագրված միջին ցուցանիշները:

Հարկերը հաշվարկելիս հիմք է հասնդիսացել համայնքում պարտադիր կիրառվող **անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով:** Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարները ենթակա են վճարման համայնքի բյուջե: Անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների, դրանց առանձին խմբերի, ինչպես նաև հարկման որոշ օբյեկտների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են հարկային արտոնություններ: Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունների սահմանման իրավասությամբ օժտված է նաև համայնքի ավագանին, որի սահմանած արտոնությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը և փոխադրամիջոցների գույքահարկի համար համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը, և այդ արտոնությունների գումարի դիմաց պետական բյուջեից լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում: Միևնույն ժամանակ համայնքների բյուջեների նախագծերում տեղական հարկերի մուտքերի կանխատեսման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել յուրաքանչյուր հարկատեսակի համար հաշվարկային գումարները, գնահատել պլանավորվող տարվա սկզբի դրությամբ կուտակվելիք ապառքների փոփոխության (մարման և/կամ նոր ապառքների առաջացման) դինամիկան և հարկային օրենսդրության հնարավոր խախտումների համար հաշվարկվելիք տույժերի և տուգանքների գծով համայնքի բյուջե գանձվելիք գումարների ծավալները (այսինքն՝ գնահատել նշված հարկատեսակների գծով համայնքի բյուջեի եկամուտների պոտենցիալ մակարդակը): Մասնավորապես, ապառքների մարման կամ նոր ապառքների առաջացման վերաբերյալ ենթադրությունները, որոնք կդրվեն այս հարկատեսակների գծով համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումների հիմքում, արտացոլվում է նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2008 թվականի օգոստոսի 15-ի N 730-Ն հրամանով հաստատված համայնքի բյուջեի (նրա բաղկացուցիչ մասերի) միասնական օրինակելի ձևի հատված 1-ի «Տեղեկություններ գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ» աղյուսակի 1-3 տողերում:

Իրատեսական կանխատեսումների համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև նախորդ տարիներին այդ հարկերի գանձելիության մակարդակը, ինչպես նաև այս բնագավառում առկա խնդիրների առաջացման պատճառները ու դրանք հաղթահարելու հնարավորությունները: Անշարժ գույքի հարկի կանխատեսումներում անհրաժեշտ է հաշվի առնել, որ անշարժ գույքի հարկով հարկման բազա են համարվում անշարժ գույքի

հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով գնահատված՝ հողամասերի և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները: Բացի այդ, նույն հարկային օրենսգրքով սահմանվել է, որ 2021 թվականի, հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և ՀՀ հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Փոխադրամիջոցների գույքահարկի կանխատեսումներում հաշվի ենք առել փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտները՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը (շարժիչով աշխատող), մոտոցիկլետը, ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը):

Աբովյան համայնքի բյուջե են մուտքագրվում օրենքով ամրագրված հետևյալ **պետական տուրքերից մուտքերը՝** նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար պետական տուրքերը:

**Տեղական տուրքերի** գծով համայնքի բյուջեի եկամուտների հաշվարկման համար կարևոր է բազայի գնահատումը, քանի որ տեղական տուրքերը և դրանց դրույքաչափերը սահմանվում են համայնքի տարեկան բյուջեի հաստատումից առաջ: Դրույքաչափերի հաստատումից հետո տեղական տուրքերի կանխատեսումը կհանգի միայն տարվա ընթացքում տվյալ տեղական տուրքի քանակի (բազայի) կանխատեսմանը: Նույն մոտեցմամբ իրականացվում է նաև **տեղական վճարներից** համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումը: Աբովյան համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին առաջնորդվել է գոտիավորման սկզբունքով, գոտի համարելով համայնքի կազմում առկա յուրաքանչյուր բնակավայրը: Գյուղական բնակավայրերում, ըստ տեղական տուրքի տեսակի կիրառվել է նաև օրենքով սահմանված 0.3, 0.5 և 0.75 գործակիցները:

Աբովյան համայնքի **այլ եկամուտներն** են համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրերի համապատասխան գանձվող վճարները՝ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները, որոնց հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել նախորդ տարիների համար կնքված պայմանագրերի ցուցանիշները: Վարձակալության

հանձնվող հողերի վարձակալական վճարները չպետք է պակաս լինեն այդ հողերի համար հաշվարկվող անշարժ գույքի հարկի մեծությունից, իսկ այս եկամտատեսակի գծով կանխատեսվող գումարները պետք է ներառեն նաև առկա ապառքների մարումից մուտքերը: Այլ եկամուտ է նաև վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան համայնքների բյուջեների վարչական մասի եկամուտների կազմում կարող են նախատեսվել պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները: Դրանցից մի տեսակի՝ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարները կհաշվարկվեն լիազորված պետական մարմնի կողմից՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան:

Համայնքի բյուջեի նախագիծ կազմելիս՝ հիմքում դրվում է համայնքի ՄԺԾԾ-ն՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

Առաջիկա երեք տարվա՝ համայնքի ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները:

**Համայնքի բյուջեի ծախսերը՝**

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքում գենդերային հավասարությանը:

Համայնքը կարևորում է համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները: Համայնքային կառավարման ոլորտում իրականացվում են համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնակազմի կարողությունների զարգացում: Տնտեսության ոլորտում շարունակվում են ներդրումները ճանապարհային տրանսպորտի, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում):

Բնապահպանության բնագավառում կարևորվում են աղբահանության և

սանիտարական մաքրման, այդ թվում՝ անօրինական աղբանոցների վերացման, ինչպես նաև թափոնների կառավարման գործընթացների և միջոցառումների ու ենթածրագրերի, տարածքների կանաչապատման, բնապահպանական այլ միջոցառումների իրականացումը:

Տրանսպորտի և կապի բնագավառում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգումը և լուսավորությունը:

Տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունն է գյուղատնտեսության, տեղական զբոսաշրջության զարգացման, արևային էներգիայով աշխատող օբյեկտների կառուցման միջոցառումների իրականացումը:

Քաղաքաշինության բնագավառի հիմնական ուղղություններն ու ծախսային գերակայություններն են՝ բազմաբնակարան շենքերի սպասարկման, վթարային շենքերի ամրացման կամ նոր շենքերի կառուցման, անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, համայնքում ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Կրթության ոլորտի գլխավոր հիմնախնդիրն է ընդունված չափանիշներին համապատասխան որակի ապահովումը: Այս տեսանկյունից ոլորտային քաղաքականությունը ներառում է 3 հիմնական ուղղություններ՝

- մանկավարժների մասնագիտական որակական բարելավումը,
- կրթական ծրագրերի բովանդակային արդիականացումն ու համապատասխանեցումը կրթությանոլորտի զարգացող պահանջներին: Կներդրվեն նոր առարկայական չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ նպատակ ունենալով խթանել սաների մտածողությունը, նորարարությունը, վերլուծական և ստեղծագործական հմտությունները:
- ուսումնական հաստատությունների արդիական նյութատեխնիկական հենքի ապահովումը և սովորողակենտրոն միջավայրի ստեղծումը: Կշարունակվեն նախադպրոցական, արտադպրոցական և մշակութային ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգումն ու կառուցումը: Միաժամանակ, հաստատությունները կապահովվեն ժամանակակից ուսումնական գույքով և սարքավորումներով:

Կրթության ոլորտի հաջորդ կարևոր խնդիրն է մատչելիության ապահովումը, որի ուղղությամբ նախատեսվում են իրականացնել հետևյալը.

- կընդլայնվի նախադպրոցական ծառայությունների մատուցման շրջանակը, ցուցաբերվող նպատակային օժանդակության շնորհիվ կմեծանա երեխաների ընդգրկվածությունը, համայնքը կապահովի սոցիալապես խոցելի խավերի

երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում,

- համընդհանուր ներառական կրթությունը կներդրվի նախադպրոցական կրթության ոլորտում, կիրականացվեն ոլորտի աշխատակազմի վերապատրաստումներ:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս առաջնորդվել ենք Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքի բյուջեի օրինակելի ձևը և նշված ձևի առանձին հատվածների լրացման մասին ցուցումները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 730 հրամանով: Ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ հաշվարկել ենք «Դաս-Կատեգորիա-Խումբ» սինթետիկ մակարդակով: Ծախսերի նախագծում համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրության չափերը որոշելիս համայնքի ղեկավարը ղեկավարվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 28-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (գնման) հոդվածներով ծախսերի նախատեսման դեպքում այդ ծախսերի հաշվարկներում ապրանքների և ծառայությունների գները հաշվարկելիս առաջնորդվել ենք հետևյալ մոտեցմամբ՝

- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա են նախորդ տարիներից շարունակվող (գործող) պայմանագրեր, որոնք տարածվում են ընթացիկ տարվա վրա, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,

- այն դեպքում, երբ տվյալ հոդվածի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գները սահմանվում են համապատասխան կարգավորող մարմինների կողմից, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով սահմանված սակագներից,

- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա չեն ընթացիկ տարվա վրա տարածվող պայմանագրեր, սակայն առկա են համապատասխան (գործող) պայմանագրեր

նախորդ տարվա համար, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով նախորդ տարվա համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,

- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար չկան գործող պայմանագրեր, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գործող պայմանագրերի, սահմանված սակագների և ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով վերջինիս վերաբերյալ ՀՀ պաշտոնական վիճակագրության կամ այլ աղբյուրների հրապարակումներում առկա տեղեկատվությունից:

Համայնքում նախատեսվում են 2027 թվականին իրականացնել հետևյալ սուբվենցիոն ծրագրերը բոլոր բնակավայրերի համար՝

- **Ասֆալտապատման աշխատանքներ և ճանապարհների բարելավման աշխատանքներ**
- **Գազատարների կառուցման աշխատանքներ**
- **Լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ**
- **Ոռոգման համակարգի վերանորոգման և ընդլայնման աշխատանքներ**
- **Ջրահեռացման համակարգի վերանորոգման և ընդլայնման աշխատանքներ**
- **Արտադպրոցական և նախադպրոցական հիմնարկներ կառուցման և վերակառուցման աշխատանքներ**

Համայնքում կիրականացվեն նաև կապիտալ ծրագրեր՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Դրանք են համայնքի փողոցների, բակերի մայթերի ասֆալտի փոսային վերանորոգում,փողոցների գծանշման աշխատանքներ,համայնքում գազաֆիկացման աշխատանքներ, նոր խաղահրապարակների կառուցում, գոյություն ունեցող մանկական խաղահրապարակների,խաղասարքերի վերանորոգում և փոխարինում նորերով, համայնքի փողոցների լուսավորության համակարգի նորոգում, նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի վերակառուցման՝ ներառյալ գույքի ձեռք բերման աշխատանքներ, տանիքների փոխարինում, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների կապիտալ վերանորոգում, շրջակա միջավայրի պաշտպանություն, բարեկարգման աշխատանքներ, վարչական և տրանսպորտային սարքավորումների ձեռք բերում:

Հավելված N 2
ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 30-ի
N 106 -Ա որոշման

## ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2027-2029թթ. վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների

(հազար դրամներով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | 2025 փաստացի | | | 2026 հաստատված | | | 2027 թվական | | | 2027թ կանխատեսված և 2026թ. հաստատված բյուջեի տարբերություն | | | 2028 թվական | | | 2029 թվական | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | 2027թ կանխատեսված և 2026թ. հաստատված բյուջեի տարբերության |
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 10 | 11 | 12 | 10 | 11 | 12 | 22 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | 6286286,5 | 5883465,4 | 402821,1 | 7576000,0 | 6456000,0 | 1120000,0 | 8648435,0 | 7148435,0 | 1500000,0 | 1072435,0 | 692435,0 | 380000,0 | 8908401,0 | 7408401,0 | 1500000,0 | 9186370,0 | 7686370,0 | 1500000,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող1140+ տող 1150 ), այդ թվում՝ | 7100 | 2523661,5 | 2523661,5 | 0,0 | 2350594,0 | 2350594,0 | 0,0 | 2383561,0 | 2383561,0 | 0,0 | 32967,0 | 32967,0 | 0,0 | 2443296,0 | 2443296,0 | 0,0 | 2521265,0 | 2521265,0 | 0,0 | Հիմք՝ ՀՀ Հարկային օրենսգրք: Կանխատեսումների ժամանակ հաշվի են առնվել բազաների ճշտումները,նախորդ տարիների հարկերի գանձելիության մակարդակը,ապառքները և գերավճարները: Անշարժ գույքի հարկի դրական տարբերությունը պայմանավորված է հարկի գումարի տոկոսային ավելացումով: |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112+տող1113), այդ թվում՝ | 7131 | 914233,5 | 914233,5 | 0,0 | 891000,0 | 891000,0 | 0,0 | 907000,0 | 907000,0 | 0,0 | 16000,0 | 16000,0 | 0,0 | 935000,0 | 935000,0 | 0,0 | 963000,0 | 963000,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 20840,5 | 20840,5 | | 20000,0 | 20000,0 | | 20000,0 | 20000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 19000,0 | 19000,0 | | 18000,0 | 18000,0 | | |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 9647,5 | 9647,5 | | 17000,0 | 17000,0 | | 17000,0 | 17000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 16000,0 | 16000,0 | | 15000,0 | 15000,0 | | |
| 1113 | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 883745,5 | 883745,5 | | 854000,0 | 854000,0 | | 870000,0 | 870000,0 | | 16000,0 | 16000,0 | 0,0 | 900000,0 | 900000,0 | | 930000,0 | 930000,0 | | |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 801044,7 | 801044,7 | 0,0 | 759000,0 | 759000,0 | 0,0 | 790967,0 | 790967,0 | 0,0 | 31967,0 | 31967,0 | 0,0 | 822702,0 | 822702,0 | 0,0 | 872671,0 | 872671,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 801044,7 | 801044,7 | | 759000,0 | 759000,0 | | 790967,0 | 790967,0 | | 31967,0 | 31967,0 | 0,0 | 822702,0 | 822702,0 | | 872671,0 | 872671,0 | | |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում՝ | 7145 | 737852,1 | 737852,1 | 0,0 | 630594,0 | 630594,0 | 0,0 | 630594,0 | 630594,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 630594,0 | 630594,0 | 0,0 | 630594,0 | 630594,0 | 0,0 | Հիմք՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք: խոշորացված համայնքի վարչական տարածքում իրականացվում է ամենամյա տեղական տուրք վճարողների |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 11301 | Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար | | 599783,0 | 599783,0 | | 500000,0 | 500000,0 | | 500000,0 | 500000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 500000,0 | 500000,0 | | 500000,0 | 500000,0 | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 10 | 11 | 12 | 10 | 11 | 12 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11302 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար |  | **1374,0** | 1374,0 |  | **10000,0** | 10000,0 |  | **10000,0** | 10000,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **10000,0** | 10000,0 |  | **10000,0** | 10000,0 |  | բազայի ճշգրտում, գույքագրում և գնահատում, որը ապահովում է պլանի աճ: |
| 11303 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար |  | **670,0** | 670,0 |  | **500,0** | 500,0 |  | **500,0** | 500,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **500,0** | 500,0 |  | **500,0** | 500,0 |  |  |
| 11304 | Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ. գազ-ի վաճառքի թույլտվ. համար |  | **7556,6** | 7556,6 |  | **8950,0** | 8950,0 |  | **8950,0** | 8950,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **8950,0** | 8950,0 |  | **8950,0** | 8950,0 |  |  |
| 11305 | Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար |  | **2937,3** | 2937,3 |  | **3640,0** | 3640,0 |  | **3640,0** | 3640,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **3640,0** | 3640,0 |  | **3640,0** | 3640,0 |  |  |
| 11306 | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար |  | **4925,5** | 4925,5 |  | **4200,0** | 4200,0 |  | **4200,0** | 4200,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **4200,0** | 4200,0 |  | **4200,0** | 4200,0 |  |  |
| 11307 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար |  | **27530,3** | 27530,3 |  | **25420,0** | 25420,0 |  | **25420,0** | 25420,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **25420,0** | 25420,0 |  | **25420,0** | 25420,0 |  |  |
| 11308 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար |  | **4354,8** | 4354,8 |  | **3000,0** | 3000,0 |  | **3000,0** | 3000,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **3000,0** | 3000,0 |  | **3000,0** | 3000,0 |  |  |
| 11309 | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար |  | **3920,9** | 3920,9 |  | **2490,0** | 2490,0 |  | **2490,0** | 2490,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **2490,0** | 2490,0 |  | **2490,0** | 2490,0 |  |  |
| 11310 | Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար |  | **13002,6** | 13002,6 |  | **8974,0** | 8974,0 |  | **8974,0** | 8974,0 |  | **0,0** | **0,0** | **0,0** | **8974,0** | 8974,0 |  | **8974,0** | 8974,0 |  |  |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 10 | 11 | 12 | 10 | 11 | 12 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11311 | Քաղաքային բնակավայրերում ավազանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու [թույլտվության համար] | | 0,0 | 0,0 | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 11312 | Ավազանու սահմանվ. կարգին ու պայման-ին համ.՝ համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադր. գովազդ-ի թույլտվ-ի (բացառ. [...]) | | 69373,1 | 69373,1 | | 59920,0 | 59920,0 | | 59920,0 | 59920,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 59920,0 | 59920,0 | | 59920,0 | 59920,0 | | |
| 11313 | Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում [...] | | 850,0 | 850,0 | | 700,0 | 700,0 | | 700,0 | 700,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 700,0 | 700,0 | | 700,0 | 700,0 | | |
| 11314 | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու [թույլտվության համար] | | 0,0 | 0,0 | | 100,0 | 100,0 | | 100,0 | 100,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 100,0 | 100,0 | | 100,0 | 100,0 | | |
| 11315 | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության [համար] | | 375,0 | 375,0 | | 1500,0 | 1500,0 | | 1500,0 | 1500,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 1500,0 | 1500,0 | | 1500,0 | 1500,0 | | |
| 11317 | Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար | | 0,0 | | | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | | |
| 11318 | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության [համար] | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 11319 | Համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրիկետի միջոցով [...] | | 0,0 | | | 200,0 | 200,0 | | 200,0 | 200,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 200,0 | 200,0 | | 200,0 | 200,0 | | |
| 11320 | Այլ տեղական տուրքեր | | 1199,0 | 1199,0 | | 1000,0 | 1000,0 | | 1000,0 | 1000,0 | | 0,0 | 0,0 | | 1000,0 | 1000,0 | | 1000,0 | 1000,0 | | |
| 1140 | **1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝** | 7146 | 70531,2 | 70531,2 | 0,0 | 70000,0 | 70000,0 | 0,0 | 55000,0 | 55000,0 | 0,0 | -15000,0 | -15000,0 | 0,0 | 55000,0 | 55000,0 | 0,0 | 55000,0 | 55000,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1141 | Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ [տալու համար] | | 18746,3 | 18746,3 | | 15000,0 | 15000,0 | | 0,0 | 0,0 | | -15000,0 | -15000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | | Հիմք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը: Պլանային թվերը կանխատեսելիս հիմք է ընդունվել [...] |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 10 | 11 | 12 | 10 | 11 | 12 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1142 | Նոտարարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթ. պատճեն. հանելու և դրանցից քաղվածք. տալու համար | | 51784,9 | 51784,9 | | 55000,0 | 55000,0 | | 55000,0 | 55000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 55000,0 | 55000,0 | | 55000,0 | 55000,0 | | նախորդ տարիների փաստացի մուտքերի հավաքագրման ցուցանիշներ |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում` | 7300 | 2873362,8 | 2470541,7 | 402821,1 | 3782639,1 | 2662639,1 | 1120000,0 | 4828105,1 | 3328105,1 | 1500000,0 | 1045466,0 | 665466,0 | 380000,0 | 5028104,2 | 3528104,2 | 1500000,0 | 5228104,2 | 3728104,2 | 1500000,0 | |
| | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված միջազգային կազմակերպություններից | 7321 | 20900,0 | 20900,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1231 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 20900,0 | 20900,0 | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված միջազգային կազմակերպություններից | 7322 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1241 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256) , որից` | 7331 | 2449641,7 | 2449641,7 | 0,0 | 2662639,1 | 2662639,1 | 0,0 | 3328105,1 | 3328105,1 | 0,0 | 665466,0 | 665466,0 | 0,0 | 3528104,2 | 3528104,2 | 0,0 | 3728104,2 | 3728104,2 | 0,0 | |
| | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1251 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 2446809,2 | 2446809,2 | | 2659840,9 | 2659840,9 | | 3325306,9 | 3325306,9 | | 665466,0 | 665466,0 | 0,0 | 3525306,0 | 3525306,0 | | 3725306,0 | 3725306,0 | | ՀՀ համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու նպատակով ՀՀ պետական բյուջեի մասին օրենքներով նախատեսված հատկացումներ |
| 1252 | պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ այդ թվում | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 10 | 11 | 12 | 10 | 11 | 12 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1253 | Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1254 | Այլ դոտացիա | | 0,0 | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1255 | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 2832,5 | 2832,5 | | 2798,2 | 2798,2 | | 2798,2 | 2798,2 | | 0,0 | 0,0 | 0,0 | 2798,2 | 2798,2 | | 2798,2 | 2798,2 | | Ըստ համայնքի ներկայացված սուբվենցիոն ծրագրերի՝ պետական բյուջեից հատկացումներ: Համայնքի կայուն զարգացումն ապահովելու համար տարեկան կանխատեսվող գումարները բավարար են: |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262), այդ թվում՝ | 7332 | 402821,1 | 0,0 | 402821,1 | 1120000,0 | 0,0 | 1120000,0 | 1500000,0 | 0,0 | 1500000,0 | 380000,0 | 0,0 | 380000,0 | 1500000,0 | 0,0 | 1500000,0 | 1500000,0 | 0,0 | 1500000,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 402821,1 | | 402821,1 | 1120000,0 | | 1120000,0 | 1500000,0 | | 1500000,0 | 380000,0 | 0,0 | 380000,0 | 1500000,0 | | 1500000,0 | 1500000,0 | | 1500000,0 | |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝ | 7400 | 889262,2 | 889262,2 | 0,0 | 1442766,9 | 1442766,9 | 0,0 | 1436768,9 | 1436768,9 | 0,0 | -5998,0 | -5998,0 | 0,0 | 1437000,8 | 1437000,8 | 0,0 | 1437000,8 | 1437000,8 | 0,0 | «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենք, գործող և նոր կնքված պայմանագրեր, պատվերներ |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝ | 7412 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334), այդ թվում՝ | 7415 | 79393,9 | 79393,9 | 0,0 | 114000,0 | 114000,0 | 0,0 | 114000,0 | 114000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 114000,0 | 114000,0 | 0,0 | 114000,0 | 114000,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | 53405,1 | 53405,1 | | 90000,0 | 90000,0 | | 90000,0 | 90000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 90000,0 | 90000,0 | | 90000,0 | 90000,0 | | |
| 1332 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 5663,1 | 5663,1 | | 2000,0 | 2000,0 | | 2000,0 | 2000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | | 2000,0 | 2000,0 | | |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 20325,7 | 20325,7 | | 22000,0 | 22000,0 | | 22000,0 | 22000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 22000,0 | 22000,0 | | 22000,0 | 22000,0 | | |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343), այդ թվում՝ | 7421 | 6005,0 | 6005,0 | 0,0 | 5999,0 | 5999,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | -5999,0 | -5999,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 10 | 11 | 12 | 10 | 11 | 12 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող | | 5997,0 | 5997,0 | | 5999,0 | 5999,0 | | 0,0 | 0,0 | | -5999,0 | -5999,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1343 | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց | | 8,0 | 8,0 | | 0,0 | | | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում` | 7422 | 567277,1 | 567277,1 | 0,0 | 812000,0 | 812000,0 | 0,0 | 812000,0 | 812000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 812000,0 | 812000,0 | 0,0 | 812000,0 | 812000,0 | 0,0 | |
| | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1351 | Տեղական վճարներ (տող13501+տող13502+տող13503+տող13504+տող13505+տող13506+տող13507+տող13508+տող13509+տող13510+տող13511+տող13512+տող13513+տող13514+տող13515+տող13516+տող13517+տող13518+տող13519+տող13520) , | | 536377,9 | 536377,9 | 0,0 | 497000,0 | 497000,0 | 0,0 | 497000,0 | 497000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 497000,0 | 497000,0 | 0,0 | 497000,0 | 497000,0 | 0,0 | |
| | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 13501 | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 13502 | Ճարտար. նախագծ. փաստաթղթ-ով նախ.՝ շինար. թույլտվ. պահանջ., բոլոր շինարար. աշխատանք-ն իրական. հետո շենք-ի և շինութ-երի (այդ թվում` դրանց վերակառ-ը, վերականգն-ը, ուժեղ-ը, արդիակ-ը, ընդլայն-ն ու բարեկարգ-ը) կառուց. ավարտը ավարտ. ակտով փաստագր. | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 13503 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար | | 6146,0 | 6146,0 | | 5000,0 | 5000,0 | | 5000,0 | 5000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 5000,0 | 5000,0 | | 5000,0 | 5000,0 | | |
| 13504 | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) | | 34,5 | 34,5 | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 13505 | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար | | 8708,2 | 8708,2 | | 8000,0 | 8000,0 | | 8000,0 | 8000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 8000,0 | 8000,0 | | 8000,0 | 8000,0 | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 10 | 11 | 12 | 10 | 11 | 12 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13507 | Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար | | **274384,4** | 274384,4 | | **265000,0** | 265000,0 | | **265000,0** | 265000,0 | | **0,0** | **0,0** | **0,0** | **265000,0** | 265000,0 | | **265000,0** | 265000,0 | | |
| 13508 | Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր | | **1156,5** | 1156,5 | | **0,0** | | | **0,0** | | | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** | | | **0,0** | | | |
| 13510 | Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում | | **3738,7** | 3738,7 | | **4000,0** | 4000,0 | | **4000,0** | 4000,0 | | **0,0** | **0,0** | **0,0** | **4000,0** | 4000,0 | | **4000,0** | 4000,0 | | |
